ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/1.1-25
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի առցանց նիստի

2025թ. փետրվարի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 1.1 կետով նախատեսված **«Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի տարեկան սպասարկում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) առցանց նիստը:

Նիստին մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Ա.Մկրտչյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ |
| Ս.Հովհաննիսյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ |
| Դ.Կարապետյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ |
| Ա.Բաբայան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ |
| Հ.Սահակյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Լ.Բասմաջյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Ջ.Հայրապետյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ |
| Շ.Հովսեփյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար |

Քվորումն ապահովված է:

***Լսեցին՝***

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

***Որոշեցին՝***

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

***Լսեցին՝***

Տեղեկատվություն՝ 2025 թվականի փետրվարի 10-ին կայացած նիստի N2/1.1-25-ԴՄ որոշմամբ՝ «Զենտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակի ներկայացման վերաբերյալ:

*Նշվեց, որ*

1. Ծրագրի հավելված 2-ի 1.1 կետով նախատեսված **«Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի տարեկան սպասարկում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը՝ «Զենտա» ՍՊԸ-ն, ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը՝ Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակի ներկայացման վերաբերյալ, Հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին ուղարկել է Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակը (կցվում է):

*Կայացավ քննարկում, որի արդյունքում*
*Հանձնաժողովը միաձայն որոշեց՝*

1. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 1.1 կետով նախատեսված **«Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի տարեկան սպասարկում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի իրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

- **«Զենտա» ՍՊԸ-ի** հետ՝ 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) (առանց ԱԱՀ) ՀՀ դրամի չափով,

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան (Հանձնաժողովի նախագահի) - ____________

Ս.Հովհաննիսյան - ____________

Դ.Կարապետյան - ____________

Ա.Բաբայան - ____________

Հ.Սահակյան - ____________

Լ.Բասմաջյան - ____________

Ջ.Հայրապետյան - ____________

Շ.Հովսեփյան - ____________